հաղիշ, Մատթէոս, Սահակ, Մովսէս, Պանդ, Ղազար և Զաքարիա։ Պատմութիւնը ցոյց է տալի (Մովսէս Կաղանկատուացի գիրք Գ. Գլուխ ԽԴ. 274—278, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց ի ստորագրութեանն հատոր Բ. յօդ. 590 յերես 333), որ Աղուանից կաթուղիկոսները սկսած սուրբ Գրիգորիսից 340 թուից մինչև 450 թիւն, ութն անձինք բնակել են Դարբանդում, ուր և եղել են Աղուանից թագաւորները, որք նեղանալով և ձանձրանալով լեկիների (Ալանաց) և Չէրքեզների (Եգերաց) և Զաչանների (Հոնաց) արշաւանքներից՝ թողին հեռացան Դարբանդից, և բնակեցան Զօղայ անունով քաղաքումն մինչև Քրիստոսի 550 թիւը։ Զօղայ քաղաքը չերեւում, բայց կարծւում է Դարբանդ քաղաքը լինել։ Այս Զօղա քաղաքիցը 552 թուիցը որպէս թագաւորական պալատը, նոյնպէս և կաթուղիկոսական վեհարանը փոխադրել են Պարտաւ քաղաքը[1]), որ Կուրի եզերքին է՝ այժմեան Շուշի քաղաքի ճանապարհի վրայ Թարթառ գետի խառնուրդի մօտերին՝ երկաթուղու գծի Ելիսաւետպոլ կայարանից 20 վերստ հեռու։ Եւ այժմ Պարտաւ քաղաքի հետքերն են մնացել, որոյ աւերակաց վրայ թուրքերն գիւղ են շինել, և են 200 տուն բնակիչք Պարտա գամի կամ Պարտա բազար անունով։ 1893 թուի հոկտեմբերին Դանձակեցի լուսանկար Սարկաւագ Յարութիւն Տէր Դանիէլեանցի հետ գնալով Պարտա քաղաքը՝ տեսինք հնութիւնքն, զոր օրինակ, աղօթատուն, ուխտատեղի պարսից, և յանձնեցինք Դանձակեցի Պ. Սարգիս Սարգսեանին պարապ միջոցին հետազօտել Պարտան։ Դարբանդի հայոց եկեղեցին շինուած է 1860 թ. վայելուչ ձեւով և զարդարուած է պատուական զարդերով և զգեստներով։

Եկեղեցւոյ շինութեան արձանագիրն հետեւեալն է՝

«Կատարեցաւ յանուն Ամենափրկչի սուրբ տաճարիս է յամի Տեառն 1860»։

---

[1])Ըստ Մխիթարայ Այրիվանեցւոյ «յամի Տեառն 452 Պարտաւ քաղաքն շինեցաւ ի Վաչէ արքայէ Աղուանից», (յերես 66. Ս. Պետերբուրգ. 1867 ամի)։